Հավելված
ՀՀ վարչապետի 2012 թ.
մայիսի 23-ի N 450 - Ա
որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարման պատասխա-նատուները | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | ՀՀ ֆինանսների և էկոնոմի-կայի նախարարի 2006 թվա-կանի սեպտեմբերի 5-ի «Գան-ձապետական պահառուի գոր-ծունեության կարգը հաստատելու մասին» N 839-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | 1) գանձապետական պահառուի գործընթացի ապահովումը նաև էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով իրականացման դրույթի սահմանում.<br>2) պարտատոմսերի առցանց վաճառքի ընթացակարգի սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | «Գանձապետական պահառուի գործընթացն առցանց եղանա-կով ապահովելու նպատակով էլեկտրոնային հատուկ համա-կարգի վարման կարգը հաս-տատելու մասին» ՀՀ ֆինանս-ների նախարարի հրամանի | գանձապետական պահառուի կողմից իրականաց-վող գործընթացն ապահովելու համար մշակված էլեկտրոնային հատուկ համակարգի սպասարկման և վարման մեթոդական ապահովում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2013 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | մշակում և ընդունում | | | |
| 3. | «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին աուդիտի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | աուդիտորական գործունեության կանոնակարգում՝<br>աուդիտի անցկացման հաջորդական քայլերի և ժամկետների սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. | «Հասարակ մուրհակի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | Հասարակ մուրհակի տրամադրման կանոնակարգում՝<br>1) տրամադրման գործողությունների հաջորդական քայլերի սահմանում՝ ըստ կատարողների և պարտականությունների.<br>2) մուրհակի ստորագրման իրավասությունը՝ աշխատակազմի ղեկավարին՝ որպես գլխավոր ֆինանսիստի, ամրագրում: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 5. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 25-ի «Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների թողարկման գործընթացը կարգավորելու վերաբերյալ» N 679-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | 1) փոխանցելի մուրհակի տրամադրման գործընթացի կանոնակարգում.<br>2) մուրհակի տրամադրման հաջորդական քայլերի սահմանում՝ ըստ կատարողների, ժամկետների և պատասխանատուների.<br>3) մուրհակի ստորագրման իրավասությունն աշխատակազմի ղեկավարին՝ որպես գլխավոր ֆինանսիստի, ամրագրում: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 6. | ՀՀ ֆինանսների նախարարի 2009 թվականի մարտի 25-ի «Լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրությունները հաստատելու, Հայաստանի Հանրապետության ֆի- | Բոլոր լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրություններում՝<br>1) հանձնաժողովի քարտուղարի գործառույթների լրացում՝ հետևյալ դրույթներով՝<br>ա. լիցենզավորման փաթեթները նիստից առնվազն 7 օր առաջ տրամադրում է հանձնաժողովի անդամներին, | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | նախսների և էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի նոյեմբերի 26-ի N 418, 2002 թվականի ապրիլի 29-ի N 329, 2007 թվականի փետրվարի 16-ի N 161-Ն հրամաններն ամբողջությամբ և 2001 թվականի դեկտեմբերի 26-ի N 517 հրամանը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | բ. նիստից 1 օր առաջ լիցենզավորման փաթեթների հակիրճ բովանդակությունը և դրանց վերաբերյալ շահագրգիռ ստորաբաժանումների կարծիքները տրամադրում է հանձնաժողովի անդամներին,<br>գ. նիստի անցկացման վայրի և ժամկետի մասին նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր կամ բանավոր տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին,<br>դ. նիստի ժամանակ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացնելուց հետո պատրաստում է եզրակացություն և ապահովում է հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից դրա ստորագրումը,<br>ե. եզրակացությունը հանձնում է հրավիրված անձին կամ նիստի ավարտից հետո պատշաճ ձևով ուղարկում է նրան.<br>2) տեղեկատվության հրապարակումը նաև պաշտոնական կայքէջում տեղադրելու միջոցով իրականացնելու դրույթի սահմանում.<br>3) հանձնաժողովներում հարցերի քննարկման ամբողջ ընթացքի ձայնագրության պահպանումը Լիցենզավորման գործակալությանը վերապահելու դրույթի սահմանում.<br>4) հանձնաժողովի եզրակացության ձևի սահմանում: | | |
| 7. | «Վիճակախաղի գովազդի բովանդակության համաձայնեցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի սեպտեմբերի 11-ի N 229 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում | 1) գործընթացի հաջորդական քայլերի, պատասխանատուների և ժամկետների սահմանում.<br>2) համաձայնեցումը գործակալության պետին վերապահելու դրույթի սահմանում.<br>3) համաձայնեցման մերժման հիմքերի, փոփոխությունների դեպքում պահանջների սահմանում.<br>4) վիճակախաղի գովազդի բովանդակության համաձայնեցման նոր ձևաչափի հաստատում: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | և ընդունում | | | |
| 8. | «Շահումով խաղեր և վիճակախաղեր կազմակերպող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվետվությունների ընդունման և վերլուծման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | 1) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների հսկողության, ինչպես նաև տարեկան ֆինանսական հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ստացման մեխանիզմների ամրագրում.<br>2) հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ստացման ընթացակարգի սահմանում՝ ըստ հաջորդական քայլերի և պատասխանատուների: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 9. | «Աուդիտորական գործունեության տեղում և փաստաթղթային հսկողության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | աուդիտորական գործունեության հսկողության իրականացման գործընթացի կանոնակարգում՝ սահմանելով գործընթացի քայլերը, ժամկետները և պատասխանատուներին | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ |
| 10. | «Մամուլի ասուլիսի կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | մամուլի ասուլիսի կազմակերպման գործընթացի կանոնակարգում՝ սահմանելով գործընթացի քայլերը, ժամկետները և պատասխանատուներին | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 11. | «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում համակարգչային տեխնիկայի սպասարկման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | համակարգչային տեխնիկայի սպասարկման գործընթացի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 12. | «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և | նախարարությանը տրամադրված ծառայողական ավտոմեքենաների բաշխման, շահագործման, ընթացիկ նորոգման և պահպանման հարցերի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատու- | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | շահագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | ների սահմանում | | |
| 13. | «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և ընդունում | նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման հարցերի կանոնակարգում, գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2012 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ